ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Աշխեն Բեգլարյան[*]

Համաշխարհային զարգացման ժամանակակից փուլն էական փոփոխություններ է մտցրել անվտանգության ընկալման ավանդական մոտեցումների մեջ: Եթե նախկինում վճռորոշ էին պետությունների մրցակցության ռազմական, քաղաքական, տնտեսական հնարավորությունները, ապա այսօր առաջ են եկել նոր չափանիշներ, որոնք պայմանավորում են պետության տեղեկատվական կարողունակության չափաբաժինն ինչպես միջազգային հարթակներում, այնպես էլ ներքին կյանքում [1, էջ 1]:

Տեղեկատվական հեղափոխության արդյունքում, որը տեղի ունեցավ 20-րդ դարի 70-ականներին, առաջադեմ մարդկությունը մեծ կախվածության մեջ ընկավ տեղեկատվական հոսքերից [1, էջ 2]: Դրական անդրադարձերի հետ մեկտեղ, այսօր այդ հանգամանքը պարունակում է նաև որակապես նոր բնույթի սպառնալիքներ ու մարտահրավերներ, որոնք պահանջում են պետություններից միջազգային վիրտուալ դաշտում գործել խաղի «նոր» կանոններով, ուր վճռորոշ են տեղակատվական հոսքերի մուտքի և ելքի կոորդինացիան, վերահսկումը, անվտանգությունը, այդ հոսքերի արագությունը, տեղեկատվական բախումները և այլն:

Փոխներթափանցելիության այսօրինակ իրողությունների պայմաններում պետությունները պետական պաշտպանության և անվտանգության ապահովման նպատակով իրենց քաղաքական բառապաշար են ներմուծում «տեղեկատվական անվտանգություն» եզրը, որի գործարկմանն ուղղված ռազմավարությունը նպատակ պետք է ունենա ապահովել պետության անվտանգությունը տեղեկատվական ոլորտում [1, էջ 3]:

[*] ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի աշխատակից:

Այսօրինակ մարտահրավերների առջև կանգնած են բոլոր պետությունները, որոնք ներքաշված են տեղեկատվական ակտիվ ներազդեցությունների և հոսքերի մեջ: Խնդիր ունենալով ոչ միայն նվազագույնի հասցնել տեղեկատվական ոլորտում ազգային շահերին սպառնացող հնարավոր վտանգների բացասական ազդեցությունը, այլ նաև նպատակ ունենալով նախաձեռնող լինել սեփական պատկերացումներից ածանցվող ազգային և պետական նպատակների անվտանգ իրականացման գործընթացում՝ պետությունները պետք է համարժեք և ժամանակակից տեղեկատվական իրողություններին համապատասխան տեղեկատվական վարք դրսևորեն [1, էջ 3]:

Դժվար է վիճարկել այն փաստը, որ ազգերի, պետությունների և քաղաքակրթությունների զարգացումը և մրցունակությունը միանշանակորեն պայմանավորված են ազգային անվտանգության վերաբերյալ նրանց ունեցած պատկերացումների հայեցակարգային մակարդակով: Համաձայն փորձագիտական մոտեցումների՝ ազգային անվտանգություն հասկացությունը ներկայացնում է երեք բաղադրամասերի՝ ռազմաքաղաքական անվտանգության, սոցիալ-տնտեսական անվտանգության և տեղեկատվական անվտանգության ամբողջությունը: Այդ ոլորտները փոխկապված են, և դրանցից յուրաքանչյուրն իր հերթին որոշակի, նույնպես կապակցված բաղադրամասերի միասնություն է: Մասնավորապես՝ տեղեկատվական անվտանգություն հասկացությունը ներառում է ոչ միայն տեխնիկական տեղեկատվական համակարգերի ապահովության խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է քաղաքակրթական-մշակութային, հոգևոր-հոգեբանական, մտավոր-գիտելիքային և կազմակերպչական ոլորտներին [2, էջ 3-4]:

Կարելի է պնդել, որ տեղեկատվական անվտանգություն հասկացությունը մի փոքր ավելի անմիջականորեն, քան ազգային անվտանգության մնացյալ բաղադրամասերը, կապված է մարդկային, հանրային և ազգային գործոնների հետ [2, էջ 3-4]:

Հայաստանյան լրատվամիջոցներում և հասարակական-քաղաքական գործիչների բառապաշարում վերջերս ավելի հաճախ է օգտագործվում նաև «տեղեկատվական հասարակություն» կամ «գիտելիքի հասարա-

կություն» եզրը: Այս միտումը վկայում է այն մասին, որ զարգացման ներկա փուլում մեր հանրությունում վերստին ձևավորվում է դրական վերաբերմունք տեղեկատվության և այդ հասկացության մաս կազմող գիտության (գիտելիքի) հանդեպ: Միևնույն ժամանակ, վերոնշյալ հասկացությունների բովանդակային ներդրումը մեր իրականություն ենթադրում է հանրության համակարգային փոփոխություն: Այսինքն՝ «տեղեկատվական հասարակության» հիմնախնդիրը և դրան ուղեկցող բազմաթիվ այլ հարցեր կարիք ունեն փորձագիտական քննարկումների և դրանցից բխող նախագծերի իրականացման[1]:

Սակայն այդ ամենը, թերևս, նպատակահարմար է սկսել շրջանառվող եզրաբանությանը վերաբերող համառոտ պատմական ակնարկից:

«Տեղեկատվական հասարակություն»: Այս եզրն առաջին անգամ կիրառել է Հայաշին Տոկիոյի տեխնոլոգիական համալսարանից, որը 1969թ. կառավարության պատվերով ուսումնասիրում էր այն տարիներին նոր զարգացող համակարգչային տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա: Ըստ Հայաշիի հետազոտության, կոմպյուտերացումը հնարավորություն է ընձեռում մարդկանց օգտվել տեղեկատվության հուսալի աղբյուրներից, ձերբազատել նրանց ամենօրյա տաղտուկ աշխատանքներից, ապահովել արտադրության ավտոմատացման բարձր մակարդակ: Ենթադրվում էր, որ այդ պարագաներում պետք է փոխվի նաև հենց բուն արտադրական գործընթացը. այդ գործընթացի արդյունքը՝ ապրանքը, պետք է դառնա «տեղեկատվապես ավելի ծավալուն», այսինքն՝ նրա արժեքի, գնագոյացման մեջ պետք է աճեն նորարարության, դիզայնի և մարքեթինգի մասնաբաժինները: Արդյունքում՝ պետք է ձևավորվեր մի նոր հասարակություն, որը ճապոնացի պրոֆեսորն անվանեց «տեղեկատվական»: Այս մոտեցումը զարգացրեց մեկ այլ ճապոնացի՝ Մասուդան, համաձայն որի՝ «հասարակության զարգացման շարժիչ ուժն է լինելու ոչ թե նյութական, այլ տեղեկատվական աշխատանքի արդյունքի ստեղծումը»[2]:

[1] *Հարությունյան Գ., ՀՀ* տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2003, էջ 12, http://noravank.am/upload/pdf/8.Gagik%20Harutyunyan.pdf

[2] Նույն տեղում:

«Տեղեկատվական հասարակության» հայեցակարգի հիմնախնդիրներին բնորոշ էր որոշակի ուտոպիզմ. ըստ նրանց՝ նման հասարակությունում չէին լինելու դասակարգեր և հակասություններ, տիրելու էին ներդաշնակություն ու համերաշխություն, կարիք չէր լինելու պետական մեծ ապարատի և այլն: Միևնույն ժամանակ, «բարձր» և «տեղեկատվական» տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա իրողություն էր:

Գիտական հանրությունը շարունակում է ուսումնասիրել ընթացող «տեղեկատվական պերմանենտ հեղափոխության» ամենատարաբնույթ ազդեցությունները հանրության վրա: Այդ համատեքստում որոշ տեսակետներ կարող են պարզունակ թվալ, սակայն մարդկության կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվական գործոնի դերակատարումը միայն աճում է, և այդ պատճառով «տեղեկատվական հասարակություն» հասկացության դասական հիմնադրույթները չեն կորցնում իրենց արդիականությունը և հրատապությունը[1]:

Գիտելիք և քաղաքականություն: Ակնհայտ է, որ ցանկացած հասարակության կամ պետության զարգացման և մրցունակության մակարդակի կարևորագույն չափանիշներից են տեղեկատվական (գիտական, տեխնոլոգիական) ռեսուրսների քանակը և որակը, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կազմակերպչական ունակությունը: Այս վերջինը խիստ կարևոր է, և այդ իսկ պատճառով կազմակերպչական ռեսուրսները հաճախ ներկայացվում են որպես տեղեկատվական ռեսուրսների բաղադրամաս: Ակնհայտ է նաև, որ հիշատակված չէին կարող զերծ մնալ քաղաքականացումից: Հատկանշական է, որ ամերիկյան ազգային անվտանգության համակարգի հեղինակավոր ներկայացուցիչներից մեկը՝ գեներալ Վաշինգտոն Պլետը, ռազմավարական հետախուզության ամենագլխավոր նպատակն էր համարում հակառակորդի գիտական ներուժի և գիտելիք կրողների վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերումը: Նման հայեցակարգային մոտեցումներ ունեցող ամերիկյան ընտրանին, բնականաբար, առանձնահատուկ հոգատարություն է ցուցաբերում սեփական մտավոր

[1] Նույն տեղում:

ռեսուրսների հանդեպ և նույնքան ուշադիր է իր մրցակիցների նմանատիպ ռեսուրսների նկատմամբ[1]:

ՀՀ գիտակրթական ոլորտի վերաբերյալ: Հայտնի է, որ խորհրդային գիտատեխնիկական համակարգում Հայաստանն առաջավոր դիրք էր գրավում: Պետք է ընդունել, որ մեր հասարակությունն այն ժամանակ անհամեմատ ավելի մեծ հիմքեր ուներ «տեղեկատվական» կոչվելու, քան այսօր: Ամրագրենք նաև, որ մեկնարկային հավասար պայմանների դեպքում գիտակրթական ոլորտում Հայաստանի առավելությունը խորհրդային այլ հանրապետությունների նկատմամբ բացառապես պայմանավորված էր գիտելիքի հանդեպ ունեցած մեր ավանդական մոտեցումներով և, առհասարակ, ազգային յուրահատկությամբ: Այս վերջին հանգամանքները խիստ կարևոր են և այսօր գրավականն են այն բանի, որ ապագայում ՀՀ-ում կարող է և վերականգնվել «գիտելիքի հասարակությունը», որին հասնելուն խոչընդոտում են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի գործոններ[2]:

Մասնավորապես, ընդունված է համարել, որ այն երկրներում, որտեղ մեկ շնչին ընկնող տարեկան եկամուտները ցածր են $20 հազարից, դժվար է խոսել «տեղեկատվական հասարակության» մասին, և սա օբյեկտիվ իրողություն է: Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ նյութական ռեսուրսներով ոչ այնքան հարուստ ՀՀ-ում արագացված զարգացումը և տնտեսական անհրաժեշտ մակարդակին հասնելը հնարավոր են միայն «տեղեկատվական հասարակությանը» բնորոշ տեխնոլոգիաների միջոցով: Միևնույն ժամանակ, մինչ հայեցակարգային որոշումների ընդունումը պետք է ձգտել նվազագույնը չվատթարացնել գիտելիքների ոլորտում տիրող իրավիճակը: Օրինակ, ներկայումս բավական մեծ կազմակերպչական միջոցներ են ծախսվում գիտության, այսպես կոչված, «կոմերցիալացման» ուղղությամբ: Սակայն նման գործընթացը պահանջում է զարգացած գիտաարտադրական ենթակառուցվածք: Ըստ փորձագետների՝ նման ոչ արդյունավետ միջոցառումները գիտական ոլորտում եզակի չեն, մինչդեռ զարգացումնե-

[1] http://noravank.am/

[2] *Հարությունյան Գ.,* ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2003, էջ 12, http://noravank.am/upload/pdf/8.Gagik%20Harutyunyan.pdf

րի այս փուլում նպատակահարմար է կայունացնել իրավիճակը և փորձել պահպանել գիտելիք կրողների խիստ նոսրացած հանրությունը, առանց որի դժվար է պատկերացնել որևէ թռիչքային անցում:

Կարելի է եզրակացնել, որ Հայաստանում «տեղեկատվական/գիտելիքի հասարակության» ձևավորման ձգտումն ավելի քան հրատապ է և այլընտրանք չունի. զարգացման այլ սցենարներն ակնհայտորեն փակուղային են: Միևնույն ժամանակ, այդ անցումը պետք է մարմնավորվի տարաբնույթ նախագծերի ստեղծմամբ, որոնց մշակման համար պետք է ներգրավել Հայության ողջ ստեղծագործական ներուժը[1]:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն փաստին, որ երբեք այսչափ չի կարևորվել լրատվամիջոցներին վերապահված՝ բնակչությանը կրթելու դերը՝ օգնելու մեզ ամբողջության մեջ ըմբռնել հասարակության մաս կազմող բազմաթիվ բաղկացուցիչներ: Փաստորեն, տեղեկատվական գործոնն արդի ժամանակաշրջանում որոշիչ դերակատարում է ձեռք բերել անհատի, հանրության, պետության ու ազգի գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Տեղեկատվության տիրապետումն է, որ հնարավոր է դարձնում հետևել և համարժեք արձագանքել արագ փոփոխվող աշխարհի իրողություններին: Տարաբնույթ տեղեկատվական գործողությունները, պատերազմներն այսօր փոխադրվել են քաղաքական հարթություն և հանդիսանում են աշխարհաքաղաքականության, աշխարհատնտեսության և աշխարհագաղափարախոսության կարևորագույն գործիքներից մեկը [2, էջ 3]:

Այսինքն՝ մենք ապրում ենք տեղեկատվության դարաշրջանում, երբ լրագրերը, հեռուստատեսությունը, ռադիոն և ինտերնետը շարունակ հնարավորություն են ընձեռում տեղեկանալ օրվա անցուդարձին և կապվել մեր հարևանությամբ կամ աշխարհի տարբեր անկյուններում բնակվող մեր համերկրացիների հետ:

Դրանք զուտ տեղեկատվական աղբյուրից բացի՝ նաև զվարճանքի, մարդկային շփումների և ինքնարտահայտման միջոց են: Լրատվամիջոցները տարբեր ժամանակահատվածներում տարբեր բնույթ են կրել, տարբեր գործառույթներ իրականացրել և ունեցել յուրահատուկ լսարան: Յուրաքանչյուր

[1] http://noravank.am/

լրատվամիջոց ունի իրեն հատուկ առանձնահատկությունը, ինչն էլ այն ավելի գերադասելի է դարձնում այս կամ այն լսարանի համար [3, էջ 23-26]:

Մինչդեռ, ըստ Մաքկլյուենի, հեռուստատեսությունն ընդգրկում է այլ մաս-մեդիաները (ռադիո, մամուլ և այլն), քանզի այն ինֆորմացիոն տեխնոլոգիաների և ինֆորմացիոն ցանցերի կարևոր տարր է հանդիսանում: Այն ընդգծում է հեռուստատեսության երկու հիմնական ասպեկտները.

- Հեռուստապատկերի մոզայիկ կառուցվածքը, որը ներկայացնում է աշխարհը որպես իրար հետ տրամաբանորեն չկապված հաղորդագրությունների շարք (օր., երբ կարճ ժամանակամիջոցում մենք ստանում ենք լրատվություն աշխարհում կատարվող բոլոր ոլորտների ու ժամանակների վերաբերյալ իրադարձությունների մասին):
- Այդ հաղորդագրությունների արձագանքն ընկալողների գիտակցության մեջ, որը հաղթահարելով մոզայիկ կառուցվածքը՝ ինտեգրում է ստացածը մեկ միասնական իմաստային ամբողջի մեջ [4]:

Ընդ որում, գիտակցության մեջ կառուցված իրականության ամբողջականության պահպանման առավել հարմար միջոցը միֆն է: «Մենք ապրում ենք միֆի կանոններով, բայց շարունակում ենք մտածել դիսկրետ տարածության բանաձևով» [4]: Իր հետազոտությունների արդյունքում Մաքկլյուենը գալիս է այն եզրակացության, որ ժամանակակից դարում ոչ միայն հեռուստատեսային ընկալումները, այլև ժամանակակից հասարակության ամբողջ կենսագործունեությունը տեղի է ունենում մոզայիկ արձագանքների սկզբունքով. հեռահաղորդակցության, մաս-մեդիայի և համակարգիչների միջոցով էլեկտրականությունը կարծես թե ազդում է կենտրոնական նյարդային համակարգի վրա, որի արդյունքում ձևավորվում է, այսպես կոչված, «գլոբալ գյուղը» [4]:

Հայաստանյան հեռուստաընկերությունները

Հայաստանում գործում են բազմաթիվ հեռուստաընկերություններ, որոնք կենտրոնացած չեն խոշոր քաղաքներում, թեև մայրաքաղաքային հեռուստաընկերություններն այժմ անհամեմատ ավելի հզոր են, քան մարզային-

ները: Հեռուստատեսության ասպարեզը Հայաստանում ունի երեք փուլ: Խորհրդային տարիներին, երբ ընդհանրապես պետության բոլոր լրատվամիջոցներն ունեին միայն մեկ գործառույթ՝ քարոզչությունը, հայաստանյան հեռուստատեսությունը նույնպես ենթարկվում էր Մոսկվայի հրամաններին [5, էջ 37]:

Խորհրդային տարիներին հայկական հեռուստատեսությունն աչքի չէր ընկնում բազմազանությամբ, քանի որ եթեր էին հեռարձակվում միայն երկու հեռուստաալիքների թողարկումներ: Հայաստանյան առաջին հեռուստատեսությունն ստեղծվել է 1956թ. նոյեմբերի 29-ին: 1957թ. փետրվարի 9-ից տրվեցին առաջին փորձնական հեռուստահաղորդումները, որոնք 1958թ. մարտի 1-ից դարձան մշտական: «Հայաստանի հեռուստատեսության» հաջորդը եղավ «Նորք» հեռուստահամալիրը: Ուշ խորհրդային տարիներին հաղորդումների բնույթը մի փոքր փոխվեց, և հնարավոր էր հեռուստատեսության միջոցով նաև կրթվել [5]:

1985թ. ԽՄԿԿ ապրիլյան պլենումում Միխայիլ Գորբաչովը հայտարարեց Սառը պատերազմի ավարտը՝ դրանով իսկ հիմք դնելով հատկապես ԶԼՄ համակարգի արմատական փոփոխություններին: Այսպես կոչված «պերեստրոյկան» կամ վերակառուցումը սահմանում էր.

1. հրապարակայնություն և բազմակարծություն,
2. պետական կյանքի ժողովրդավարություն,
3. ազատ ձեռներեցության խթանում,
4. նոր գործընկերային հարաբերությունների հաստատում արտաքին աշխարհի հետ:

Ողջ Խորհրդային Միության տարածքում անմիջապես ի հայտ եկան կոմերցիոն հեռուստաընկերություններ և հեռուստահաղորդումներ, որոնք թե՛ որակական առումով, թե՛ բովանդակությամբ տարբերվում էին կենտրոնական հեռուստատեսության նախկին պատկերացումներից:

Անկախ հեռուստատեսությունների շարքին կարելի է դասել կաբելային հեռարձակմամբ զբաղվող ընկերությունները: Այս ժամանակահատվածում այդ կազմակերպությունները հիմնականում իրենց արտասահմանյան

գործընկերների հաղորդումների վերահեռարձակումներն էին իրականացնում: Նաև կարևոր տեղ էր հատկացվում արտասահմանյան ֆիլմերի ցուցադրությանը:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո մեկը մյուսի հետևից նոր հեռուստաընկերություններ ի հայտ եկան: Կարևորվում էր նաև անկախ հեռուստատեսության ծնունդը: Հայաստանում անկախ հեռուստատեսություն լինելու հավակնություն ունեցող ընկերությունները հիմնականում քաղաքական բնույթ ունեին և ընդգծված ընդդիմադիր էին: Հայաստանյան անկախ հեռուստաընկերությունները հեռուստաշուկայի որոշակի սկզբունքներ էին ստեղծում և նորարար էին: Անկախ հեռուստաընկերությունների շնորհիվ հանրապետական հեռուստաշուկա ներմուծվեցին արևմտյան լրատվամիջոցներում վաղուց զարմանք չհարուցող նորույթներ՝ զվարճալի հաղորդումներ, թոք-շոուներ, լրատվություն մատուցելու յուրահատուկ ձև, որոշակի հեռուստատեսային ձեռագիր և, ամենակարևորը՝ գովազդ և գովազդային բնույթի հաղորդումներ [3; 5, էջ 16-39]:

Հայաստանում հեռուստատեսությունները նկարագրելու համար կարևոր է նշել, որ կոնկրետ ուղղվածության հեռուստատեսություն չկա: Այսինքն՝ գրեթե բոլոր հեռուստատեսությունները ներկայացնում են թե՛ վերլուծական, թե՛ զվարճալի հաղորդումներ: Տպավորություն է ստեղծվում, որ արևմտյան հեռուստատեսության և այսպես կոչված սեգմենտավորված հեռուստատեսությունները Հայաստանում դեռևս չեն ընդունվում հեռուստատեսությունների ղեկավարների կողմից: Սա բնորոշ գիծ է հայաստանյան գրեթե բոլոր հեռուստաընկերությունների համար [3; 5, էջ 16-39]:

Ժամանակին համընթաց ու ժամանակի պահանջներին համարժեք՝ տարիներ շարունակ զանգվածային լրատվամիջոցները ոչ միայն մշակույթ են ձևավորում, այլև ապրելակերպ, մտածողություն, կարծրատիպեր և այլն:

Առավել մանրամասն անդրադառնալով հեռուստատեսությանը՝ հարկ է նշել, որ չնայած հեռուստատեսությունը միշտ ազդեցության ամենահզոր գործիքներից է եղել, նրա ազդեցությունն աստիճանաբար էլ ավելի է մեծանում՝ արբանյակային, թվային, ինտերնետային հեռուստատեսության զարգացմանը զուգընթաց: Հեռուստատեսության հայտնի հերոսները

դառնում են հասարակությանը բարոյականություն, ոճ, մտածելակերպ, բառապաշար թելադրողներ: Հեռուստատեսությունը, թերևս, համացանցից հետո ամենաանձնավորված հաղորդակցության միջոցն է, որը հեռուստադիտողի մեջ կարող է տպավորություն առաջացնել, թե հաղորդավարը հենց իր հետ է զրուցում: Այն (որոշ չափով նաև այլ տեղեկատվական տեխնոլոգիաները) խախտեց անձի ձևավորման ավանդական ձևերը և խորացրեց հայրերի և որդիների տարանջատումը: Սերունդների ավանդական դաստիարակության մեթոդներն այլևս կորցրին իրենց արժեքն ու հնարավորությունները: Այն հասարակությունները, որոնք չեն գիտակցում հեռուստատեսության հեղափոխիչ ու կարևոր դերը սերունդների դաստիարակության, «աշխարհի պատկերի» ձևավորման գործում, ունենում են անհաղթահարելի խնդիրներ:

Մեդիա մեկնաբան Մ.Մաքկլյուենի կարծիքով՝ հեռուստատեսությունն ազդում է անկախ իր բովանդակությունից: «Հեռուստատեսության ազդեցությունը շատ դժվար է գիտակցել, որովհետև այն ազդել է մեր կյանքի բոլոր՝ անձնական, սոցիալական, քաղաքական ոլորտների վրա»:

Ժամանակակից ղեկավարներն այլևս ոչ միշտ են դիմում ժողովրդին կենտրոնական հրապարակներից, դրա փոխարեն ելույթ են ունենում հեռուստատեսությամբ: Ժամանակակից պատերազմները շատ դեպքերում սկսվում են հեռուստակայանների, ոչ թե ռազմաբազաների կամ ռազմավարական այլ կարևոր օբյեկտների ռմբակոծություններից[1]:

Հեռուստատեսությունը թույլ է տալիս ընտրել՝ ազդեցությունն իրականացնել տեքստայի՞ն/վերբալ, թե՞ պատկերային ձևով: Տեքստային ձևն ուղղված է մասնագիտական և ինտելեկտուալ լսարանին, որը պահանջում է փաստեր, թվեր, հաշվարկներ, վիճակագրություն: Իսկ պատկերային ազդեցությունն ուղղված է հասարակ, ոչ մասնագիտական լսարանին, որին ավելի շատ անհրաժեշտ են հուզիչ տեսարաններ, դրամատիկ պատմություններ ու սենսացիաներ: Երկրորդ տարբերակն առավել ազդեցիկ է, քանի որ ազդեցությունը գործում է զգացմունքների վրա՝ ենթագիտակցական մակարդակում:

[1] *Վահրամ Միրաքյան,* ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4646

Ըստ սոցիալական հոգեբանների՝ ԶԼՄ-ն ու հեռուստատեսությունը կարող են նաև որոշակի կենսական արժեքների ու որոշակի վարքային մոտիվների ձևավորման համար վտանգավոր զենք հանդիսանալ: Ընդ որում՝ անգամ «փորձված աչքը» հաճախ կարող է դժվարանալ տարանջատել հետաքրքիր ռեժիսորական քայլերը մանիպուլյատիվ քայլերից: Որպես օրինակ. «Ռեմբո»-ն պարզապես հետաքրքիր մարտաֆի՞լմ է, թե՞ Վիետնամի հետ պատերազմում ինֆորմացիոն հաղթանակ, հայկական հեռուստաթերը ողողած սերիալները պարզապես սցենարիստների ու ռեժիսորի աշխատանք են որոշակի տեքստո՞վ, թե՞ կոնկրետ քաղաքական ուժի քարոզչություն ու հակառակ բևեռի նսեմացում... Մասնագետների գնահատմամբ՝ այսօր ԶԼՄ-ով, հեռուստատեսությամբ մատուցվող նյութը համապատասխանում է մոտավորապես 10 տարեկան երեխայի զարգացման աստիճանին: Իսկ բռնության և դաժանության արտահայտումների ցուցադրումը ԶԼՄ-ում նպաստում է քրեական ենթամշակույթի զարգացմանը, ինչը բացասաբար է անդրադառնում դեռահասների ու երիտասարդների սոցիալականացման գործընթացի վրա: Ըստ փորձագետների գնահատման, լրատվամիջոցների բացասական ազդեցությունը նշել է Երևանում անցկացված հարցման մասնակիցների շուրջ 43%-ը: Նույնիսկ արտակարգ իրավիճակի պայմաններում՝ վերահսկվող ԶԼՄ-ն ոչ միայն դիսֆունկցիոնալ են գործում, այլև կրում են դեստրուկտիվ բնույթ: Մինչդեռ, լրագրողական միջազգային ասոցիացիաներից մեկը դեռ 1993թ. Բրյուսելում ընդունել էր մի դեկլարացիա, որի համաձայն՝ չի խրախուսվում բռնության, ահաբեկչության և այլ դաժան վարվելաձևերի ցուցադրումը: Մինչդեռ հոգեբան Ալբերտ Նալչաջյանի կարծիքով՝ հեռուստատեսությունն, անշուշտ, ավելացնում է մարդկանց ագրեսիվությունը, սակայն ավելի շատ այն դեպքերում, երբ նախկինում արդեն կային ագրեսիվ վարքի դրսևորումներ, կամ էլ եթե ընտանիքը խրախուսում է անհատի նման վարքը[1]:

Ըստ էության, այսօր հեռուստատեսությունը դարձել է բռնության, պրիմիտիվ տեղեկատվության գեներատոր, որը ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև ձևավորում է այն: Օրինակ, վերջին տարիներին

[1] http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4646

Հանրային հեռուստատեսության հասցեին հնչած քննադատությանն ի պատասխան՝ Հանրային հեռուստառադիոընկերության պատասխանատուներն արտահայտել են այն միտքը, թե հեռուստատեսությունը հասարակության հայելին է, ինչպիսի հասարակություն ունենք, այնպիսին էլ հեռուստատեսությունն է[1]:

Սակայն Հանրայինն ինքը կոչված է հասարակություն ձևավորել: Ավելին, որպես պետբյուջեից ֆինանսավորվող կառույց, այն պարտավոր է հետապնդել պետական-ազգային շահ, այլ ոչ թե լինել կրավորական հայելի: Եթերը հեղեղված է «աստղերի» ցածրաճաշակ շոուներով, անբովանդակ զրույցներով, չկան վերլուծական, քաղաքական, տնտեսական, մշակութային, Սփյուռքին նվիրված, ազգային լրջմիտ հաղորդումներ: Չեն լուսաբանվում-պարզաբանվում կառավարության նախաձեռնությունները: Ոչ մի դերակատարություն չունի պետական-ազգային մշակութային քաղաքականություն մշակելու խնդրում[2]:

Լրատվամիջոցների պատասխանատվությունն է՝ տրամադրել փաստեր, որոնք հանրությանը թույլ կտան պատասխանատու որոշումներ ընդունել: Բայց նույնքան կարևոր է և այն, որ կառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունները ևս պատասխանատվություն ունեն պատշաճ կերպով իրազեկելու լրատվամիջոցներին:

Այսպիսով, մեր պետական համակարգում տեղեկատվական գործոնի և սպառնալիքների կարևորման միտումը հստակ արտահայտվեց 2008թ. ՀՀ նախագահի ծրագրային ելույթներից հետո: Արդյունքում՝ ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի կողմից ստեղծվեց տեղեկատվական անվտանգության խնդիրներն ուսումնասիրող միջգերատեսչական հանձնաժողով, որը ոչ միայն մշակեց Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը, այլև ակտուալացրեց խնդիրը պետական-քաղաքական համակարգում:

[1] http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4646

[2] *Խաչատուր Դադայան,* ՊԵՏԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2232

Այսօր արդեն ազգային անվտանգության ռազմավարության բաղադրյալ հանդիսացող տեղեկատվական անվտանգության հայեցակարգի իրականացման փուլում առաջին հերթին համապատասխան գործիքներ են հանդիսանում նախևառաջ լրատվամիջոցները:

Հուլիս, 2011թ.

Աղբյուրներ և գրականություն

1. ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, 2009թ. հունիսի 26, էջ 1-3:
2. *Հարությունյան Գ.,* Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ, Տարածաշրջան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, 2005, էջ 3:
3. *Աստղիկ Ավետիսյան,* «Հանրային կապեր», Երևան, 2008:
4. *Mc Luhan M.,* Understanding media, NY, 1967.
5. *Հրաչուհի Բարսեղյան,* PR տեքստեր և մեդիապլանավորում (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2008:
6. *Բայադյան Հ.,* Ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2005:
7. *Սառա Սիլվեր,* Լրատվամիջոցների հետ հարաբերությունները, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Երևան, 2003:
8. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005:
9. ՄԱԿ, մարդկային զարգացման զեկույց, Երևան, 2005:
10. *Սաղաթելյան Արման,* Պետության տեղեկատվական քաղաքականության հիմնախնդրային ասպեկտների շուրջ, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (10), 2005:
11. *Տեր-Հարությունյանց Գագիկ,* Հոգևոր անվտանգությունը՝ որպես տեղեկատվական անվտանգության բաղադրամաս, «21-րդ ԴԱՐ», թիվ 4/10/, 2005:
12. *Абдеев Р.Ф.,* Философия информационной цивилизации, М., 1994.
13. *Алексеева И.Ю.,* Возникновение идеологии информационного общества, Институт философии РАН, 1998.
14. *Вус М.А.,* Информационное общество, информационное управление, информационная безопасность., СПб, 1999.
15. *Дейзард У.,* Наступление информационного века //Новая технократическая волна на западе, с. 343-344.
16. Информационная безопасность. Сборник тезисов, докладов и сообщений Санкт-Петербургского /17-18 мая 1995/ семинара, СПг., 1995.
17. *Кастельсь М.,* Становление общества сетевых структур, М., 1999.
18. Концепция информационной безопасности Российской Федерации, Проект // Вестник РОИВТ, 1995, вып. 6, с. 53-78.
19. *Тер-Арутюнянц Г.,* Информационные вызовы, Голос Армении, 08.12.2001.

ТЕЛЕКАНАЛЫ В КОНТЕКСТЕ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ

Ашхен Бегларян

Резюме

Современный этап мирового развития внес существенные изменения в традиционные подходы к восприятию безопасности. Если раньше определяющей была конкурентоспособность военных, политических, экономических возможностей государства, то сегодня актуализировались новые параметры, обусловливающие долю информационной состоятельности государства как на международных площадках, так и во внутренней жизни.

Сегодня информационная безопасность стала неотъемлемым компонентом национальной безопасности, а приоритетными инструментами обеспечения информационной безопасности выступают прежде всего СМИ и в первую очередь – телеканалы.